

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 26-ին, Վարդավառի կիրակի օրը, հոգևոր ուրախության և ոգեշնչումի օր էր Նյու Յորքի Ս. Վարդան Մայր տաճարում: Օրվա մեծ տոնի հանդիսավոր պատարագի ընթացքում Ս. Էջմիածնի և Ս. Ներսեսի հոգևոր ճեմարանների շրջանավարտ բարեշնորհ Վազգեն սրկ. Պերպերյանը քահանայական ձեռնադրությամբ կոչվեց ի ծառայություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Նախորդ օրը, հուլիսի 25-ին, երեկոյան ժամերգությունից հետո, ըստ Հայ Եկեղեցու կարգաց և կանոնաց, կատարվել էր նորընծայի «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» (Ձեռնադրության Մաշտոց) կարգը, երբ բարեշնորհ սարկավագը, տալով իր հավատի ուղղափառ դավանությունը, խոստանում է «յանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա»:

Կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Ս. Վարդան Մայր տաճարում սկսվում է հանդիսավոր ս. պատարագ: Օրվա պատարագիչն է Ամերիկայի Արևելյան թեմի հայոց բարեխնամ առաջնորդ գերշ. Տ. Խաժակ եպս. Պարսամյանը:

Ամերիկահայ հավատավոր ժողովուրդը, հավաքված եկեղեցու խնկաբույր կամարների ներքո, բարեպաշտական զգացումներով հետևում է սրբազան խորհրդի ընթացքին:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով» աղոթքը, ապա ձեռնադրության խարտավիլակ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը բարեշնորհ Վազգեն սարկավագին ծնրադիր առաջնորդում է Ավագ խորան, ուր նորընծան «Աստուածային և երկնաւոր շնորհ» հոգեհույզ շարականի երգակցությամբ, ձեռամբարձ հրաժարվում է աշխարհիկ ունայնությունից՝ կոչվելով սարկավագությունից ի քահանայություն:

Այնուհետև նորընծան ծնրադիր մոտենում է սրբազան հորը, և ձեռնադրող Տ. Խաժակ եպիսկոպոսը, ձեռքը դնելով նրա գլխին, արտասանում է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ» աղոթքը: Նորընծային շնորհվում է քահանայական փիլոն, շուրջառ, սաղավարտ, փորուրար կրելու իրավունք:

Պատարագի սրբազան արարողությունը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը: Ապա ձեռնադրության սրբազան արարողությունը հասնում է իր հոգևոր վերացման բարձունքին. սկսվում է ս. օծման խորհրդավոր պահը: Ձեռնադրող սրբազան հայրը սրբալույս մեռոնով օծում է նորընծայի ճակատն ու ձեռքերը և նրան վերանվանում Տ. Նարեկ քահանա: Այնուհետև նորաօծ քահանան, դառնալով դեպի ժողովուրդը, տալիս է իր անդրանիկ օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Հավարտ հանդիսավոր ձեռնադրության գերշ. Տ. Խաժակ եպս. Պարսամյանը բովանդակալից քարոզ խոսեց: Սրբազան հայրը, վկայակոչելով նորընծայի հոգևոր-իմացական կարողությունները, հույս հայտնեց, որ նա իր ուխտի գիտակցումով կծառայի հայ հավատավոր ժողովրդին:

Սրբազան հայրն այս բացառիկ առիթով շնորհավորեց ամերիկահայ համայնքին՝ Աստուծո մի նոր սպասավորի օծման առիթով:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, կատարվեց «Օրհնութիւն աբեղայի» և «Օրհնութիւն վեղարի» կարգը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի, ու Տ. Նարեկ աբեղա Պերպերյանն ստացավ կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարը:

Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ՊԵՐՊԵՐՅԱՆ

Ծնվել է 1967 թ. հոկտեմբերի 28-ին Բեյրութում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Վահան Թեքեյան դպրոցում:

1981 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և բարձր առաջադիմությամբ ավարտել 1988 թ.:

1986 թ., ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1988 թ. մեկնել է Նյու Յորք և իբրև ուսանող սովորել Ս. Վլադիմիր Ուղղափառ աստվածաբանական համալսարանում, միևնույն ժամանակ հետևել նաև Ս. Ներսես ընծայարանի դասերին:

1991 թ. ավարտել է իր ուսումը և Ս. Վլադիմիրից ստացել աստվածաբանության վկայական: Որոշ ժամանակ անց աստվածաբանական սեմինարիայից ստացել է Մագիստրոսի աստիճան՝ մասնագիտանալով Նոր Կտակարանի մեջ:

Հոգեշնորհ հայր սուրբը իր ուսումնառության տարիներին լծվել է հոգևոր-մշակութային գործունեությանը. Ս. Վարդան Մայր տաճարում կազմել է պատանիների երգչախումբը, եկեղեցու սպասավորության համար կրթել է մի քանի դպիրներ:

1992 թ. հուլիսի 26-ին, ձեռամբ գերշ. Տ. Խաժակ եպս. Պարսամյանի, ձեռնադրվել է աբեղա:

Այժմ Նարեկ աբղ. Պերպերյանը ծառայում է Հյուսթոնի հայ համայնքում որպես հոգևոր հովվի օգնական: